ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **21.07.2021թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20.07.2021թ. N 03-Լ որոշման համաձայն որոշվել է Տեսչական մարմնի 2022 թվականի բյուջետային հայտի նախագիծը քննարկել հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021 թվականի հուլիսի 20-ին և ավարտվել 2021 թվականի հուլիսի 21-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց.

1. <u>ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի բյուջետային հայտի նախագծի քննարկում և հավանության արժանացում</u>:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց կողմ
3) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4) Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
5) Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6) Կ. Բրուտյանը քվեարկեց դեմ (ներկայացված է դիտարկում՝ կցված),
7) Գ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
8) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 7 կողմ, 1 դեմ:

Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի բյուջետային հայտի նախագծին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ